Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Դեկտեմբեր 2022
Լրատու թիւ 25

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Ողջոյնի Խօսք

Սեպտեմբերի 11-ին սկսուեց 2022-2023 ուսումնական տարեշրջանը: Երկար ընդմիջումից յետոյ մենք կարողացանք հաւաքուել սրահում՝ աշխատանքային օրը սկսելով Տէրունական Աղօթքով և մեր Հայրենիքի Օրհներգով:

Հոկտեմբերի 16-ին Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանում նշեցինք Ս.Թարգմանչաց տօնը և յանձնեցինք 2021-2022 ուսումնական տարւայ շրջանաւարտներին իրենց աւարտական վկայականները:

Վարժարանի ուսուցչական կազմը անցած տարի պատրաստեց «Հայոց Լեզու սկսնակների համար» դասագիրքը, որը շատ օգտակար կլինի անգլիախօս աշակերտների համար:

Առաջին եռամսեակն աւարտուեց դեկտեմբերի 11-ին Նոր Տարւայ և Սուրբ Ծննդեան տօներին նւիրուած հանդէսով և հոգաբարձուների ու Ծնողական յանձնախմբի կողմից կազմակերպւած ճաշկերոյթով:

Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ օգտուելով առիթից շնորհաւորում եմ բոլորիդ Ամանորի և Սուրբ Ծնունդի առթիւ, մաղթում եմ Ձեզ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւն, անձնական երջանկութիւն և թող իրականութիւն դառնան Ձեր բոլորի նպատակներն ու երազանքները:

2022 թւականը շատ ծանր տարի էր մեր հայրենիքի համար, Թող 2023 թուականը մեր հայրենիքի և աշխարհի համար լինի խաղաղութեան, յաղթանակների և առաջընթացի տարի:

2023 թ յունւարի 8-ին կը վերսկսուեն վարժարանի երկրորդ եռամսեակի աշխատանքները:

Վարժարանի տնօրինուհի
Ռուզաննա Թաթուլեան

Շնորհաւոր Նոր Տարի և Սուրբ Ծնունդ

Վերամուտ

Այս տարի դպրոցի վերամուտը սկսվեց Սեպտեմբերի 11 ին: Երկու տարի շարունակ վիրուսներից զերծ մնալու պատճառով առավոտյան երեխաները սրահում չէին հանդիպում:

Այս տարի վեջապես անցանք մեր բնականոն աշխատանքներին: Երեխաները մեծ ոգևորությամբ և անհամբերությամբ դպրոց էին եկել հանդիպելու իրենց ընկերներին և վերսկսելու նոր ուսումնական տարին մեծ ուժով և եռանդով:
Վերամուտը սկսվեց Տիկին Ռուզաննայի ողջույնի խոսքով, այնուհետև աշակերտները ծանոթանալով իրենց նոր ուսուցչի հետ ուրախ և զվարթ գնացին իրենց դասարանները:

Շատ հուզիչ և հաճելի էր տեսնել, թե ինչպես հայրենիքից հեռու գտնվելով, ինչպիսի մեծ պատրաստակամությամբ են մեր սիրելի աշակերտները հաճախում դպրոց՝ սովորելով մեր լեզուն, մշակոյթը, պատմությունը և մեր հոգևոր արժեքները:

The school reopened its doors on September 11th 2022. After the summer break, the teachers, parents and pupils returned to school with great excitement. For two years, we did not have our morning assembly to avoid spreading viruses by gathering in the hall. This September we resumed our usual morning routine and activities.
After Mrs R Tatulian welcomed everyone back to school, the children met their teachers and went to their classrooms happily.
It is very to see how our children, far away from the homeland, attend school willingly, to learn our language, culture, history and spiritual values.

Ս.Թարգմանչաց տօն և 2021-22 շրջանաւարտների հանդէս

Հոկտեմբերի 16-ին Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանում նշեցինք Ս.Թարգմանչաց տօնը և յանձնեցինք 2021-2022 ուսումնական տարւայ շրջանաւարտներին իրենց աւարտական վկայականները:
Վարժարանի տնօրինուհի տիկ Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց օրւայ խորհուրդը նշելով, որ Ս. Թարգմանչաց տօնը հայ ժողովրդի ամենանուիրական և սիրուած ազգային-եկեղեցական տօներից է, որը կարևոր նշանակություն է ունեցել իրենց ինքնութեան կերտման ճանապարհին:

Դպրոցէն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

2021-22 ուսումնական տարւայ շրջանաւարտների հանդէս

Շատ տպաւորիչ էր Վարժարանի երգչախումբի կատարած «Մեսրոպ Մաշտոցը և հայոց Այբուբենը» և « Ջան, ջան, ջան աշուն է» երգերը:
Արևմտահայերէն բաժնի 1-ին և 2-րդ դասարանների աշակերտները և արևելահայերէն բաժնի 5-ից 8-երորդ դասարանների աշակերտները արտասանեցին մեր հայրենիքին և մեր ոսկեղնիկ լեզուին նուիրուած հայ բանաստեղծների ստեղծագործութիւնները:
Շատ յուզիչ էր շրջանաւարտների ելոյթները, նրանք բոլորը ներկայացրին իրենց պատրաստակամութիւնը մեր հայրենիքին օգնելու՝ իրենց ընտրած մասնագիտութեան շրջանակներում: Առաջին դասարանի աշակերտները ծաղիկներ նուիրեցին շրջանաւարտներին, իսկ շրջանաւարտները նրանց նուիրեցին Սիլւա Կապուտիկեանի « Խօսք իմ որդուն» գրքոյկը:
Տիկ Թաթուլեանը շնորհաւորեց շրջանաւարտներին, իրենց ծնողներին և ուսուցչուհիներին, ովքեր տարիներ շարունակ հետևել են երեխաների հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը:
Նա ցանկացաւ, որպիսզի բոլորն իրենց արժանի տեղը գտնեն կեանքում, մաղթելով բոլորին յաջողութիւններ իրենց կեանքի նոր հանգրւաններում, ուժ և եռանդ, նպատակների և իղձերի իրականացում:
Հանդէսին ներկայ էր ՀՀ Արտակարգ և Լիազոր դեսպան պրն Վարուժան Ներսիսեանը և տիկին Ներսիսեանը:
Դեսպան Ներսեսեանը շնորհաւորելով շրջանաւարտներին վարժարանն աւարտելու առթիւ՝ յանձնեց նրանց աւարտական վկայականները, և վստահութիւն յայտնեց, որ դպրոցում ստացած գիտելիքները նրանց կօգնի պահպանել և զարգացնել հայկական ինքնութիւնը: Դեսպանը յուլս յայտնեց, որ շրջանաւարտներն իրենց գիտելիքները և կարողութիւնները կծառայեցնեն ինչպէս Մեծ Բրիտանիայի, այնպէս էլ Հայրենիքի զարգացմանը:
Հանդէսի վերջում շրջանաւարտների ծնողները կազմակերպել էին հիւրասիրութիւն ներկաների համար:

Graduation Ceremony for 2021-2022 Academic Year's Students

On October 16, we celebrated the Feast of the Holy Translators and the graduation of the 2021-22 academic year's students.

The school's headteacher, Mrs Ruzanna Tatulyan, stated that the Holy Translator's Day is one of the most cherished and beloved national-ecclesiastical holidays of the Armenian people, which played an important role in the formation of their identity.

The songs "Mesrop Mashtots and the Armenian Alphabet" and "Jan, jan, jan is autumn" performed by the school's choir were very impressive.

The children of the 1st and 2nd grades of the Western Armenian classes and the children of the 5th to 8th grades of the Eastern Armenian classes recited the works of Armenian poets dedicated to our homeland and our golden language.

The speeches of the graduates were very touching, they all presented their readiness to help our motherland within the framework of their chosen profession. The students of the first grade gave flowers to the graduates, and the graduates gave them the book "Khosk im Vortun" by Silva Kaputikyan.

Mrs. Tatoulyan congratulated the graduates, their parents and teachers, who have been following their Armenian education for years.

She wished everyone success in the new milestones of their life, that they find their rightful place in life and have strength and energy to fulfil their goals and dreams.

RA Ambassador Extraordinary and Plenipotentiary Mr. Varuzhan Nersisian and Mrs. Nersisian were present at the ceremony.

The Ambassador handed the graduates their diplomas and congratulated them on their achievement. He expressed confidence that the knowledge they received at the school will help them preserve and develop their Armenian identity. He hoped that in the future, the graduates will use their knowledge and abilities for the development of both Great Britain and the Motherland.

At the end of the ceremony, the parents of the graduates welcomed the attendees to a reception they had organised.

Երեք սերունդ Գ. Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի հետ

2023 թւականին լրանում է վարժարանի հիմնադրման 45 ամեակը:
Սկսած 1978 թւականից Դիլանչեան ընտանիքը, Տէր և Տիկին Վրէժ և Նազիկ Դիլանչեանները վարժարանի հետ են և ամէն առիթով օգնում են վարժարանին:
Տիկին Նազիկ Դիլանչեանը սկսած 1978 թւականի յունուարից աւելի քան 25 տարի դասաւանդել է վարժարանում: Նա իր մեծ ներդրումն է ունեցել վարժարանի կայացմանը և իր գործոն մասնակցութիւնն է բերել կրթական ծրագրերի մշակման գործում:
Վարժարանում սովորել և աւարտել են Տիկին Դիլանչեանի որդին՝ Քարլօն և դուստրը՝ Սիլվան: Քարլօն սիրով օգնում է ծնողական յանձնախմբին ձեռնարկների ընթացքում: Սիլվան վարժարանն աւարտելուց յետոյ աշխատել է վարժարանում, որպէս ուսուցչուհու օգնական, իսկ այժմ աշխատում է որպէս հոգաբարձու:
Վարժարանում սովորեցին և բարձր առաջադիմութեամբ աւարտեցին նաև Տիկին Դիլանչեանի թոռները՝ Ստեֆանը և Նաթալին: Նաթալին այս տարի աւարտեց վարժարանը և սիրով աշխատում է վարժարանում, որպէս մանկապարտէզի ուսուցչուհուն օգնական:
Վարժարանն իր երախտագիտութիւն է յայտնում Դիլանչեան ընտանիքին, վարժարանի նկատմամբ ունեցած իրենց նուիրուածութեան համար:

2023 marks the 45th anniversary of the establishment of the school.
Since 1978, the Dilanchian family, Mr. and Mrs. Vrezh and Nazik Dilanchian have been with the school and help the school at every opportunity.
Mrs. Nazik Dilanchian taught at the school for more than 25 years, starting from January 1978. She made a great contribution to the establishment of the school and contributed to the development of educational programs.
Mrs. Dilanchian's son, Carlo, and daughter, Silva, studied at and graduated from the school. Carlo helps the parents' committee ad hoc during events. Silva worked at the school as a teaching assistant after graduating, and now she works as a governor.
Mrs. Dilanchian's grandchildren, Stefan and Natalie, also studied at the school and graduated with high grades. Natalie graduated last year and loves working at the school as a helper with the nursery children.
The school expresses its gratitude to the Dilanchian family for their dedication and continued support.

Ծնողական Ընդհանուր Ժողով

Նոյեմբերի 27-ին տեղի ունեցաւ վարժարանի Ծնողական ընդհանուր ժողովը: Վարժարանի տնօրինուհի տիկ. Ռուզաննա Թաթուլեանը ներկայացրեց վարժարանի կրթական վիճակը: Վարժարանի հոգաբարձուների ատենապետ և գանձապահ պարոն Կարօ Գարաբէյեքեանը ներկայացրեց վարժարանի ֆինանսական վիճակը: Ծնողական յանձնախմբի ատենապետ Անի Անդրեասեանը ներկայացրեց ծնողական յանձնախմբի աշխատանքները: Հոգաբարձու Հայկ Արմաղանեանը ներկայացրեց բազմաթիւ առաջարկութիւններ ի նպաստ վարժարանի աշակերտութեանը:

Անի Անդեասեանը և Լուսինէ Պետրոսեանը ընտրուեցին Հոգաբարձութեան նոր անդամներ: Շարիս Բաբախանեանը դուրս եկաւ հոգաբարձութիւնից, սակայն ընդգծեց, որ ցանկացած հարցում օգտակար կլինի վարժարանի աշխատանքներին:
Ժողովի ընթացքում արուեցին բազմաթիւ առաջարկութիւններ վարժարանի աշխատանքների վերաբերեալ:
Վերջում հոգաբարձուները և տնօրինուհին պատասխանեցին ծնողներին հետաքրքրող հարցերին:

The AGM of parents took place on November 27th. The headteacher, Mrs R. Tatulyan discussed with the parents the school's structure and curriculum. Chairman and treasurer of our school's governors, Mr Garo Karabeyekian, presented the school's accounts. Ani Andreasyan, chairman of the parents' committee, presented the works of the parents' committee. Governor Haig Armaghanian presented many proposals for the benefit of the school's students.

Ani Andeasian and Lousine Petrosian were elected new members of the governing body. Sharice Babakhanian resigned from her role, but emphasised her willingness to help when needed.
During the meeting, many proposals were made regarding the work of the school.
At the end of the meeting, the governors and the headteacher answered questions raised by parents.

Նոր Դասագիրք

Վարժարանի ուսուցչական կազմը 2021-2022 ուսումնական տարում պատրաստեց «Հայոց Լեզու սկսնակների համար» դասագիրքը, որը շատ օգտակար կլինի անգլիախօս աշակերտների համար:
During the academic year 2021-2022, the teaching staff of the school prepared the "Armenian Language for Beginners" textbook, which will be very useful for English-speaking students.

Ամանորի Հանդէս եւ տօնավաճառ

Դեկտեմբեր 11-ին տեղի ունեցավ վարժարանի Ամանորի հանդեսը: Մինչ հանդեսի սկսվելը, ծնողական հանձնախմբը կազմակերպել էր ճաշկերույթ, որտեղ հյուրերը համտեսեցին բազմազան համեղ ճաշատեսակներ և թխվածքաբլիթներ:

Բովանդակալից հանդեսի ընթացքում երեխաները խանդավառությամբ դիմավորեցին գլխավոր հերոս՝ Զմեռ Պապիկին: Նրանք ներկայացրեցին «Հիսուսի ծնունդը», « Եղեսնու պատմությունը», «Քաջ Նազար» բեմադրությունները, ինչպես նաև մի շարք այլ գեղեցիկ բանաստեղծություններ, երգեր և պարեր: Երգչախումբը հրաշալի կատարեց Ամանորին նվիրված երգեր: Ամանորի հանդեսը վարեցին դպրոցի նախկին շրջանավարտներ, այժմ ուսուցչուհիներ՝ Նարե Ղարիբեանը և Վանուհի Պետրոսյանը:

Վարժարանի տնօրենուհի տիկ. Ռուզաննա Թաթուլյանը շնորհավորեց բոլորին Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Նա իր խորին շնորհակալությունը հղեց բոլոր ուսուցչուհիներին, բարերարներին, հոգաբարձուներին, ծնողական հանձնախմբի անդամներին, բոլոր ծնողներին, որոնց օգնությամբ իրականացնում են բազմաթիվ ձեռնարկներ ի նպաստ վարժարանի:

On December 11, the school's Christmas and New Year's performance was held. On the day, the Parents' Committee had organised a fair where the guests tasted a variety of tasty dishes and desserts.

The children enthusiastically welcomed Santa Claus and performed to him the stories of "The Nativity", "The Christmas Tree" and "Nazar the Brave ", as well as a number of other beautiful poems, songs and dances. The choir performed wonderful Christmas songs. The performance was conducted by former graduates of the school, now teachers, Nare Gharibean and Vanuhi Petrosyan.

Headteacher of the school Mrs. Ruzanna Tatulyan congratulated everyone on the New Year and Christmas holidays. She expressed her deep gratitude to all the benefactors, governors, members of the parents' committee and all the parents who carry out many initiatives for the benefit of the school.

Ամանորի Հանդէս

2021-22 ուսումնական տարեայ շրջանաւարտների երազանքները

Այսօր մենք հրաժեշտ ենք տալիս մեր սիրելի հայոց դպրոցին:
Այստեղ մենք սովորեցինք մեր ոսկեղենիկ հայոց լեզուն, սովորեցինք ինչպես պահենք և պահպանենք այն: Սովորեցինք նաև սիրել և փայփայել մեր հայրենիքը:
Յավոք այս օրերին մեր հայրենիքը դժվարին օրեր է ապրում: Ես ցանկանում եմ տնտեսագետ դառնալ և օգնել , որ իմ հայրենիքի տնտեսությունը հզորանա ու ամրանա:

Ներսես

Ես ցանկանում եմ բժիշկ դառնալ, որ կարողանամ օգնել մեր վիրավոր զինվորներին, որոնք հերոսաբար պաշտպանում են մեր հայրենիքը:

Ինեսսա

Ես ցանկանում եմ իմ հայրենիքը տեսնել հզոր ու ապահով:
Համալսարանն ավարտելուց հետո պատրաստվում եմ տեղափոխվել Հայաստան հիմնել իմ բիզնեսը և նպաստել ռազմական արդյունաբերության զարգացմանը:

Գրեգ

Կարծիք մեր վարժարանի մասին

“Չափազանց ազդեցիկ էր այցը Լոնդոնի Գևորգ Թահթաեան կիրակնօրյա դպրոց: Հպարտությամբ փաստում ենք, որ կրթական գործի կազմակերպման գործում մեծածավալ աշխատանք է իրականացվում, որպեսզի երեխաները խոսեն հայերեն, մեծանան հայրենասեր, կրթվեն և դաստիարակվեն հայեցի: Վարժարանի տնօրինուհի տիկին Ռուզաննա Թաթուլյանի, ուսուցիչների և բոլոր նվիրյալների ջանքերով դպրոցում հայոց լեզվի և հայոց պատմության գիտելիքների հետ մեկտեղ աշակերտներին փոխանցվում են մեր ազգային ինքնության արժեքները, սովորությունները և ազգային մշակութային ժառանգությունները: Արդյունքները տպավորիչ են և շատ ուրախալի:”

Լիլիթ Մելիքյան
Տերյան մշակույթային կենտրոնի տնօրեն

“A visit to the Kevork Tahtaian Armenian Community Sunday School in London was very impressive. We are proud to state that great effort is being carried out in organising educational work so that children speak Armenian, grow up patriotic, and be educated and brought up as Armenians. With the efforts of the headtacher of the school Mrs. Ruzanna Tatulyan, teachers and all the devotees, along with the knowledge of the Armenian language and Armenian history, the values of our national identity, customs and national cultural heritage are transferred to the students. The results are impressive and very gratifying.”

Lilit Melikyan
Director at Teryan Cultural Centre

Մեծ Բրիտանիոյ 14 տարեկան պատանիների շախմատի չեմպիոն
2022 UK Chess Challenge Terafinal Under 14s

Մեր վարժարանի 8-րդ դասարանի աշակերտներէն Լևոն Զաքարեանը 2022 թւականին 14 տարեկան պատանիների շախմատի մրցոյթում յաղթեց իր հասակակիցներին և դարձաւ Բրիտանիայի չեմպիոն: Շնորհաւորում ենք Լևոնին և մաղթում նրան նորանոր յաջողութիւններ:

In 2022, our school’s student in year 8, Levon Zakarian won the title in the Terafinal chess challenge for under 14-year-olds and became the champion. We congratulate talented Levon and wish him new and continuous success.

2022 - 2023 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 11 Սեպտ. 2022 – 11 Դեկտ. 2022 Term I 12 September 2022 – 12 December 2022	
11 Սեպտեմբեր 11 September	Վերամուտ Back to school
16 Հոկտեմբեր 16 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
23 Հոկտեմբեր 23 October	Արձակուրդ Half-Term Break
27 Նոյեմբեր 27 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
11 Դեկտեմբեր 11 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 8 Յունուար 2023 – 26 Մարտ 2023 Term II 8 January 2023 – 26 March 2023	
22 January	Open Day
4 Փետրուար 4 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
12 Փետրուար 12 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
19 Փետրուար 19 February	Արձակուրդ Half-Term Break
19 Մարտ 19 March	Մայրերու Օր Mothers' Day and Open Day
26 Մարտ 26 March	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 16 Ապրիլ 2023 –9 Յուլիս 2023 Term III 16 April 2023 – 9 July 2023	
7 Մայիս 7 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
14 May	Open Day
21 Մայիս 21 May	Մարզական Օր Sports' Day
11 June	Open Day
25 Յունիս 25 June	Դաշտահանդէս School BBQ
9 Յուլիս 9 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան,
Տիկ Գայանէ Յակոբեան, Տիկ Քրիստինէ Նանյան, Օր Վանուհի Պետրոսյան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան